

քանչիւր արարքին մէջ սիրոյ լոյսն է որ կը շողայ: Մարդուն կեանքը, զիշերին մէջէն քալել մըն է, շրջապատուած թշնամիներով: Կը քալէ ցաւով և հեծութեամբ, նպատակի մը՝ որուն քիչեր և ընտրեալներ միայն կրնան հասնիլ:

Հոն՝ բաղձացուած կատարին վրայ չէ տրուած մեզի երկաթօրէն յամենալ: Մի առ մի, բոլոր մեր ընթացակից բարեկամները կ'անհետանան մեր տեսողութենէն, ձերբակալուելով ամենազօր մահուան լուռ իշխանութենէն: Շատ կարճ միջոց մը միայն կրնանք օգնել անոնց և այդ կարճ ժամանակին մէջ կ'որոշուի անոնց դժբախտութիւնը կամ երջանկութիւնը: Մեր պարտականութիւնը թող ըլլայ լուսաւորել անոնց ճամբան, թեթեւցնել անոնց տառապանքին բեռը, քաջալերել և յուսադրել երբ քաջութիւնն ու յոյսը տակաւ կը հեռանան անոնցմէ. և վերջապէս հաւատք ներշնչել անոնց, երբ կը պարպուին հաւատքէ: Մի կշռէք և մի չտփէք անոնց արժէքներն ու թերիները, մտածեցէք անոնց կարիքնե՛րուն և ցաւերուն մասին: Մի մոռնաք որ տառապակիցներ են քրոջորս ալ, նոյն մթութեան մէջ. մթութիւն մը՝ որ միայն մեր Տիրոջ սիրովը կը լուսաւորուի, այլապէս մենք նոյն մեծ ողբերգութեան զերակատարներն ենք միայն:

Այսօր կրնանք մեր ամենասիրելի էակը կորսնցնել, վաղը սակայն, մենք պիտի անցնինք մահուան դռնէն, մեզի կը մնայ ուրիմն զիրար սիրել, վերջին վարագոյրին իջնելէն առաջ: Սիրել վեհ և մեծ այն մտածումները որոնք կ'ազնուացնեն մեր կեանքը, մեր պզտիկ օրերը:



Ա. ՅԱԿՈՒԲԻ



ՆՏՐԱԾՆ

Հ Ն Ո Ս Ե Դ Ի Ր Ն Ե Ր

Երուսաղէմ, 11 Օգոստոս 1956

Ն. Վեն. Հիւսէյն Թազուոր

Արեւայական Պալատ

Ամման

Ձերդ Վեհափառութեան զախակալութեան բարեբաւտիկ սարեղարձի առիթով, կը ներկայացնեմ մեր հաւատարմութիւնն ու նուիրումը Ձերդ Վեհափառութեան հանդէպ եւ կ'աղօթեմ որ Ամենակալը շնորհէ Ձերդ Վեհափառութեան երկար կեանք եւ երջանկութիւն, եւ բարգաւաճութիւն Հաւիմական քաղաւորութեան:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԷՐԵԱՆ

Տեղապան Հայոց Պատրիարքութեան

Արեւելիք Ամմանի, 16 Օգոստոս 1956

Դեր. Տ. Նիլիէ Արեւայ. Տրեսերեան

Պատրիարքական Տեղապան

Երուսաղէմ

Շնորհակալութիւն Ձեր անկեղծ շնորհաւորութեան համար մեր զախակալութեան սարեղարձիկ առիթով:

Ա. - ՀԻԻՍԷՑՆ



ՍԵՆՏԵՆՏԱԿԱՆԻՐ - ԲԵՄՍԿԱՆԻՐ

● Կիր. 1 Յուլիս. — Ս. Եղիայի մարգարէին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ: Ժամաբարն էր Նոգ. Տ. Մաշտոց վրդ. Բարխուսեան:

— Վաղուան նախատեսակին ի Ս. Հրեշտակապետ նախագահեց Գեր. Տ. Պարզե Եպս. վըրթանէսեան:

● Յլ. 2 Յուլիս. — Ս. Կուսանացն Հովնիսիմեանց: Առատեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Եկեղեցւոյ ասանդատան Ս. Հովնիսիմեանց մատարան մէջ: Ժամաբարն էր ՀայՓայի և ջըջակայից Նոգեոր Նոսիւ Նոգ. Տ. Շահան Արքեպ Սվանեան:

● Ուր. 6 Յուլիս. — Վաղուան նախատեսակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Հանդիսապետն էր Գեր. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան:

● Եր. 7 Յուլիս. — Ս. Գր. Լուսաւորչի եղ ի վերապէ՛ տունին առթիւ, Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի ասանդատան Ս. Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամաբարն էր Նոգ. Տ. Վարժաւան վրդ. Գապարեան:

— Վաղուան հանդիսաւոր նախատեսը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ. Հանդիսապետն էր Գեր. Տեղապահ Ս. Հայրը, որ ժամերգութեան ընթացքին ուրար կրելու արտօնութիւն տուաւ ժառ. Վարժարանի քառամեայ ընթացքը բարձրած 6՝ ինչպէս նաև Ամերիկայէն, քանանայութեան պատրաստուելու համար ժամանած 3 սաներուն: Ըստ սովորութեան, նախատեսակէն ետք երգուեցաւ «Տէր ողորմաւ»:

● Կիր. 8 Յուլիս. — Տոն Կար. Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի: Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին մէջ: Պատարագեց Գեր. Տ. Հմայեակ Ծ. վրդ. Ինթոյեան և քարոզեց՝ ընթան ունենալով «Եկայք, շինեցուք սուրբ շէնքերն լուսոյն»: Քարոզէն ետք, Գեր. Տ. Տիրան Արքեպս. Կերտոյեանի նախադաճութեամբ, կատարուեցաւ Հայրապետական մաղթանք:

● Կիր. 15 Յուլիս. — Բարեկ. Ս. Լուսաւորչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ: Պատարագեց Նոգ. Տ. Կորիւն վրդ. Սանուէրեան: Քարոզեց Գեր. Տ. Տիրան Արքեպս. Կերտոյեան, անդրադառնալով երէկուայ տունէլի սուրբին՝ Մեծն Կերտէսի կհանքին ու գործունէութեան վրայ և Ս. Պատարագէն ետք նախագահեց Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեանի մահուան տարելիցին առթիւ կատարուած հոգեհանգստեան հանդիսաւոր կարգին:

● Ուր. 20 Յուլիս. — Վաղուան հանդիսաւոր նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան:

● Եր. 21 Յուլիս. — Գիւս Եղիարայ Ս. Գրիգոր Լուսաւորչին: Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Ս. Մակարայ մատարան մէջ մատուցուեցաւ Սուրբ Պատարագ, ժամաբարն էր Նոգ. Տ. Յակոբ վրդ. Վարդանեան:

● Կիր. 22 Յուլիս. — Այսօր մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ Մայր Տաճարին մէջ, Ս. Աթոռոյ մեծանուն բարերար Գալուստ Պէյ Կիւլպէնկեանի մահուան տարելիցին առթիւ: Պատարագեց Նոգ. Տ. Թորգոմ վրդ. Սանուէրեան: Քարոզեց Գեր. Տ. Տիրան Արքեպս. Կերտոյեան, անդրադառնալով հանգուցեալ Բարերարի կհանքին ու գործունէութեան մասին: Ս. Պատարագէն ետք, Գեր. Տեղապահ Ս. Հայրը նախագահեց հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունքին:

● Գլ. 25 Յուլիս. — Թարգմանչաց հանդիսաւոր նախատեսակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Հանդիսապետն էր Գեր. Տ. Տիրան Արքեպիսկ. Կերտոյեան:

● Ել. 26 Յուլիս. — Ս. Թարգմանչացն Սանակայ եւ Մեծոթայ (Տոն Ազգային): Ըստ սովորութեան, Մայր Տաճարին մէջ Ս. Պատարագը մատուցուեց Ս. Թարգմանչաց Վարժարանի առժժ. Տեսուչը՝ Նոգ. Տ. Զաւէն վրդ. Չինչինեան և քարոզեց՝ «Որք զարգացրէք յանձնարար զիմաստս անեղինքն արանով»:

● Եր. 28 Յուլիս. — Վաղուան նախատեսը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Հանդիսապետն էր Գեր. Տ. Պարզե Եպս. վրթանէսեան:

● Կիր. 29 Յուլիս. — Գիւս Տիմ Ս. Ասուածամնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ: Պատարագեց Նոգ. Տ. Մաշտոց վրդ. Բարխուսեան և քարոզեց թրիստունէական երէք մեծ առաքինութիւններուն՝ Հաւաքի, Յոյսի և Սիրոյ մասին:

● Ուր. 3 Օգոստ. — Մայր Տաճարին մէջ, վաղուան նախատեսակին նախագահեց՝ Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան:

● Եր. 4 Օգոստ. — Ս. Երիզանցն Առաքելացն Բիւսոսի եւ Պողոսի երեսասանեւոր Առաքելոյն: Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պողոսի վերնամատարան մէջ: Պատարագեց Նոգ. Տ. Գէորգ Արք. Կաղարեան:

● Կիր. 5 Օգոստ. — Բարեկ. Վարդավառի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ: Ժամաբարն էր Նոգ. Տ. Զաւէն վրդ. Չինչինեան:

● Ուր. 10 Օգոստ. — Վաղուան նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածնի մատարան մէջ, նախադաճութեամբ Գեր. Տ. Պարզե Եպս. վրթանէսեանի:

● Եր. 11 Օգոստ. — Յիւստակ Տաղանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածնի: Պատարագիչն էր Նոգ. Տ. Մաշտոց վրդ. Բարխուսեան:

— Վարդավառի հանդիսաւոր նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տեղապահ Սրբազանը: Ապա կատարուեցաւ քանանայական կոչման արարողութիւն:

— Իրիկնաղէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուած Եկեղեցւոյ և Հսկման արարողութիւններուն նախագահեց Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան:

● Կիր. 12 Օգոստ. — ՎԱՐՄԱՎԱՍԻ (Տոն Այլիկեղաւթեան Տեսն): Օրուան հանդիսաւոր Ս.

Պատարագը՝ Մայր Տաճարի Ասոց Սեղանին լրաց մատոյց Գեր. Տեղապահ Ս. Հայրը և կատարեց քահանայական ձեռնադրութիւնը Յովսէփ Սրկ. Մամուրի և Նազար Սրկ. Մարգարեանի, վերակաշխատի զանոնք Տ. Յովսէփ և Տ. Մամբրէ կուսակրօն արեղաներ:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաստան»: Հանդիսապետն էր Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան: Ապա պաշտուեցաւ երեկոյեան ժամերգութիւն, որմէ յետոյ կատարուեցաւ նորընծաներուն վեղարի տըւչութեան կարգը՝ նախագահութեամբ Գեր. Տեղապահ Սրբազան Հօր:

● Բշ. 13 Օգոստ. — Յիւստակ մեռելաց: Սուրբ Պատարագը ի Ս. Գլխաղբ մատոյց Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան: Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի նախագահութեամբ կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ, ապա Տաճարի գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատր. Հօր շիրմին լրաց, ինչպէս նաև հին կրատան ու Չամբաղի զերեզմանավայրերուն մէջ:

● Կիր. 19 Օգոստ. — Բարեկ. Ս. Աստուածմծի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ, Պատարագեց Հոգ. Տ. Գէորգ Արդ. Նազարեան: Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արքանամեանի նախագահութեամբ կատարուեցաւ «Խաղաղօրհնէք»:

● Ուր. 24 Օգոստ. — Վաղուան նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատարան մէջ: Հանդիսապետն էր Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արքանամեան: Ապա կատարուեցաւ սարկաւազական կոչման արարողութիւն:

● Շբ. 25 Օգոստ. — Տօն Ծղակալարի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը ի Ս. Էջմիածին մատոյց Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գապարահան, որուն ընթացքին, Գեր. Տ. Հայկազուն Եպս. կատարեց 9 սարկաւազներու ձեռնադրութիւնը (Մանուսեանի մեծեր «Սիսն» լաջոգ քիտի):

— Վերափոխման մեծահանդէս նախատեսակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Հանդիսապետն էր Գեր. Տ. Դերենիկ Եպս. Փռլատեան:

— Գեր. Սրբազանը նախագահեց նաև իրիկնաղէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցեցէք» և Հակման արարողութիւններուն:

● Կիր. 26 Օգոստ. — Վերստիտուտի Ս. ԱՍՏՈՒԱՅՄԱՆԻ: Հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարին մէջ մատոյց Գեր. Տ. Դերենիկ Եպս. Փռլատեան և քարոզեց, բնաբան ունենալով օրուան ձաշու ընթերցուածէն «Այսուհետև չես ծառայ, այլ որդի եմէ որդի և ժառանգ Աստուծոյ» (Գալ. Դ. 7):

— Կէսօրէ վերջ, Գեր. Սրբազանը նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»ին: Ապա պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն և նախատեսակ, Հանդիսապետն էր Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան:

● Բշ. 27 Օգոստ. — Յիւստակ մեռելաց: Սուրբ Պատարագը ի Ս. Գլխաղբ մատոյց Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բարխուսեան: Ս. Պատարագէն ետք,

Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արքանամեանի նախագահութեամբ, կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ, ապա Տաճարի գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատր. Հօր շիրմին լրաց, ինչպէս նաև հին կրատան ու Չամբաղի զերեզմանավայրերուն մէջ:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Բշ. 2 Յուլիս. — Երեկոյեան, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, որ մօտ ամիսէ մը ի վեր ընդհատան կը գտնուէր, վերադարձաւ Ս. Աթոռ:

● Դշ. 4 Յուլիս. — Կէսօրէ վերջ, Միացեալ Նահանգաց անկախութեան 170րդ տարեգործի առթիւ, Ամերիկեան Հիւպատոսարանի մէջ տըրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տեղապահ Ս. Հայրը, Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Դշ. 10 Յուլիս. — Կէսօրէ վերջ, Սէուզ Արարիոյ Հիւպատոսարանին մէջ, մեկնող Հիւպատոս Շէյխ Մոհամմէտ Սըտգի Էլ Մանսուրի կողմէ ի պատիւ նորընտիր Հիւպատոս Շէյխ Ալի Սաղբրիի տըրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արքանամեան և Տիար Կարապետ Յակոբեան:

● Դշ. 11 Յուլիս. — Կէսօրէ վերջ, Քաղաքիս Խալամ և Քրիստոնեայ Բարեօրական կազմակերպութեանց կողմէ, ի պատիւ Սէուտական Արարիոյ մեկնող և նորընտիր Հիւպատոսներուն, Al-Zahra պանդոկին մէջ տըրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Պարզե Եպս. Վրթանէսեան և Տիար Կարապետ Յակոբեան:

● Շբ. 14 Յուլիս. — Կէսօրին, Յրանաակալ Հիւպատոսարանի մէջ, Յրանաւայր աղջային տունին առթիւ տըրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արքանամեան և Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան:

● Գշ. 17 Յուլիս. — Կէսօրէ առաջ, Ն. Վ. Հիւսէյն Թաղաւորի հովանաւորութեամբ, Cinema Al-Hambraի մէջ, Միջին Արևելքի Արարական Բժշկական 24րդ Համագումարի բացման հանդէպի ներկայ եղան Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արքանամեան և Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գապարահան:

— Կէսօրէ վերջ, Orient Houseի սրահներուն մէջ, Քաղաքապետարանի կողմէ, ի պատիւ Արարական Բժշկական Համագումարի անդամներուն տըրուած թէյնասեղանին ներկայ եղան Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արքանամեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Դշ. 18 Յուլիս. — Կէսօրէ առաջ, Խալամայ Գուրպան պարամի առթիւ, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեանի և Տիար Կարպիս Հինդլեանի, շնորհաւորական այցելութիւն տուաւ Քաղաքի Մոհամմէդլին, Ոստիկանապետին, Մի. Փիլիսին, և Երկրպետական ու Սէուզի Արարական Հիւպատոսներուն:

— Նոյն ատեն, Գեր. Տ. Հմայեակ Ծ. Վրդ.

ինթոնյան արձակուրդով մեկնեցաւ Պոլիս և վերադարձաւ ԴՂ. 22 Օգոստոսի երեկոյեան:

— Կէսօրէ վերջ, Սպանիոյ ազգային տօնին առթիւ, Սպանիական Հիւպատոսարանի մէջ աըրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Հայրիկ եպօ. Աւլանեան, Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեան և Տիար Կարպիս Հինգիւան:

● Եր. 21 Յուլիս. — Կէսօրէ վերջ, Պելճիքայի անկախութեան 117րդ տարեդարձին առթիւ, Պելճիքական Հիւպատոսարանի մէջ արուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Հայրիկ եպօ. Աւլանեան և Տիար Կարպիս Հինգիւան:

— Երեկոյեան, Ս. Ուխտիս Միաբաններէն Գեր. Տ. Գարեգին Թ. Վրդ. Գաղանեան, որ 5 տարիներէ ի վեր կը գտնուէր Պոլիս, ժամանեց Ս. Աթոռ և շարաթ մը ետք արձակուրդով մեկնեցաւ Եւրոպա:

● ԲՂ. 23 Յուլիս. — Կէսօրէ վերջ, Եթովպիոյ Ն. Վ. Հայլէ Աէլասիէ Կայսեր ձնդեան 64րդ տարեդարձին առթիւ, Եթովպական Հիւպատոսարանին մէջ արուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Հայրիկ եպօ. Աւլանեան և Տիար Կարպիս Հինգիւան:

● ԴՂ. 1 Օգոստ. — Կէսօրէ վերջ, Al-Zahra պանդոկին մէջ, Բաղաքիս Ոստիկանապետին մեկնման առիթով արուած թէյասեղանին ներկայ եղան Գեր. Տեղապահ Ս. Հայրը և Գեր. Տ. Հայրիկ եպօ. Աւլանեան:

● ԵՂ. 2 Օգոստ. — Կէսօրին, Սէուտի Արաբական նորընտիր Հիւպատոսար իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Պատրիարքարանին:

● ԵՂ. 9 Օգոստ. — Կէսօրէ առաջ, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեանի և Տիար Կ. Հինգիւանի, փոխ-այցելութիւն տուաւ Անուսական Արարիոյ նորընտիր Հիւպատոսին:

● Եր. 11 Օգոստ. — Իրիկուան ժամը 6ին, Հոսովի Ֆրանչիսկեանց Միաբանութեան Ընդհ. Մեծաւոր՝ Père Augustine Sepinski, ընկերակցութեամբ Ֆրանչիսկեան Հայրերու, այցելեց Պատրիարքարան և ընդունուեցաւ Տեղապահ Ս. Հօր և Միաբանութեան անդամներուն կողմէ:

● Կիր. 19 Օգոստ. — Կէսօրէ վերջ, Ֆրանչիսկեաններու վանքին մէջ, ի պատիւ Հոսովի Ֆրանչիսկեանց Մեծաւորին արուած թէյասեղանին ներկայ եղան Գեր. Տ. Հայրիկ եպօ. Աւլանեան և Տիար Կարպիս Հինգիւան:

● ԲՂ. 20 Օգոստ. — Կէսօրէ առաջ, Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեան մեկնեցաւ Սիւրիա-Լիբանան, Ժառ. Վարժարանի 1956-57 դպրոցական տարեըջանի համար նոր սաներ արձանագրելու:

● ԴՂ. 21 Օգոստ. — Երեկոյեան, Անթիլիասի Դպրեմանուց վերատեսուչ Գեր. Տ. Գերենիկ եպօ. Փոլատեան ժամանեց Ս. Աթոռ:

ՄՐՏԱՆԱԿԱՐԱՇԵՈՒԹԵՍՆ ԷՍՆԳԻՒՍ

ԺԱՌԱՆԳ. ՎԱՐժԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

Ս. Աթոռոյ ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի 1955-1956 տարեըջանի Ամսվերջի Մրցանակաբաշխութեան Հանդէսը տեղի ունեցաւ 5 Յուլիս, Հինգշաբթի երեկոյեան ժամը 7-9.30, Վարժարանի հանդիսարանին մէջ, ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և հրատարակչներու տուտար բաղմութեան: Հանդէսին կը նախագահէր Պատր. Տեղապահի Փոխանորդ Գեր. Տ. Սուրէն եպօ. Քէմնանեան:

Միաբանութեան սրահ մտած պահուն, Ժառ. Սաներ սկան երգել Վերտի Ի սիրտս վարժարանի քայլերը: Երբեք որմէ ետք Տեսուչ Գեր. Տ. Հայկազուն եպօ. Արքայանեան ըրաւ հակիրճ քաջման խօսքը: Ապա շուրջ երեք ժամերու տեղութեամբ իրազօրժուեցաւ ըստ բաւականին նոյն ու կողմիկ յայտադիր մը, քաղկեանք երկու մասերէ:

Առաջին մասը կը բաղկանար Ժառ. սաներու կողմէ կատարուած արտասանութիւններէ (Հայրերէն Գրարար և Աշխարհաբար, Անդիներէն, Արարերէն և Ֆրանսերէն լեզուներով), շարադրութիւններէ, մեներգներէ և խմբերգներէ, զոր կը ղեկավարէր Յեռնասօրէն վարժարանի երամբշտութեան ասուցիչ և զպրպագետ Տիար Սահակ Գալայնեան:

Շարադրական կտորները զգալիօրէն ի յայտ կը բերէին այն յառաջդիմութիւնը՝ որ Ժառանգաւորաց Վարժարանինն է, շնորհիւ Գեր. Տեսուչին և ուսուցչական կազմին՝ որուն ք շնն զլանար իրենց կարելին, վարժարանը իր վերելքի համբուն մէջ պահելու համար միշտ, ու ժառանգաւորի հոգոյն մէջ սերմանելու կրօն-եկեղեցական սիրոյն քովն ի վեր նաև սէր՝ դէպի մայրենի լեզուն ու մշակոյթը:

Եղան երեք քանախօսութիւններ, Բարեշնորհ Սարկաւազներու կողմէ, Բարեշ. Արմենակ Սրկ. Շիրվանեան, իր սահուն լեզուով ներկայացուց Հայց. Եկեղեցւոյ զաւանանքին ու խորհուրդներուն շուրջ իր ստացած մայն ծանօթութիւնները:

Երկրորդ մասը, հինգ վարկեան զաղարէ մը ետք, սկսաւ Ժառ. սաներու կողմէ երգուած Ս. Աթոռոյ քայլերգով ժօրհնեցէք զՏէր: Ապա Գեր. Տեսուչ Ս. Հայրը կարգաց վարժարանի միամեայ զօրժուելութեան տեղեկագիրը, ուր անցնող տարւոյ մասին զոնուանկութեամբ արտայայտուելէ ետք, շնտեց նոր ուժերու պէտքը ուսուցչական կազմին մէջ, որպէսզի Վարժարանը յառաջիկային ալ աւելի յառաջդիմէ ու վերագտնէ նախորդ տանամանկներու իր բոլորած արդիւնաւու ընթացքը:

Ուսումնական և մարզական հիւպերու մէջ յաջող աշակերաններու գիրքերով ու բաժակ-մէտալներով պարգևատրուելէ ետք, Նախագահ Ս. Հայրը ըրաւ փակման խօսքը, յորդրելով ժառանգաւորներուն ըլլալ ուղիւ ու պարկեշտ ուսանողները այս յարկին՝ լաւ օրերու ու իրենց սանողներուն մէջ նոր նուաճումներու տեսիլքով կանքերուն մէջ նոր նուաճումներու տեսիլքով գտնեպինդ, ըլլալու համար մէյ մէկ ժրջան պահանկները այս Հաստատութեան:

Միաբանները երգուած Հայր մերէն ետք, հանդիսականները արձակուեցան Նախագահ Սրբազանին զօրհանդիմելու և օրհնութեամբ:

ԱՄՍՎԵՐՋԻ ՀՍՆԳԷՍ

ԱՄՍԱՆԻ ՆԵՓՈՒՍԵԱՆ ԱԶԳ. ՎԱՐժԱՐԱՆԻ

Ամամերիկյան Նեֆուսեան վարժարանի Ամալեբը՛ի Հանդէսը տեղի ունեցաւ Տ Յուլիսի կիրակի առաւօտուն, Ամամերիկայի Սրտոն Սինեմային մէջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Տ. Եղիշէ Արք. Տէրտէրեանի:

Հանդէսը բացաւ զապուստի նոր Հոգևոր Հովիւ և վարժարանի տեսուչ՝ Հոգ. Տ. Վաղգէն Արք. Գրպրոբընեան, որմէ ետք, չուրջ երեք ժամերու տեսութեամբ, վարժարանի աշակերտութիւնը կատարեց խմբերգներ, մեներգներ, արտասանութիւններ, եայն, որւնք ի յայտ կը բերէին ուսանողութեան զգալի յառաջդիմութիւնը կրթական և բարոյական մարզերու մէջ:

Հանդէսի աւարտին, Մանկապարտէզի 27 և Նախակրթարանի 17 երկսեռ ընթացաւարտները ստացան իրենց վկայականները Գեր. Տեղապահ Սրբազանէն, որ մրցանակներու բաշխումէն ետք տուաւ իր պատգամը շրջանաւարտներուն ու փակեց Հանդէսը կէսօրին, «Պատգամիչ»-ով և Տէրունական աղօթքի երգեցողութեամբ:

ԱՄՍՎԵՐՋԻ ՀՍՆԳԷՍ

Ս. ՅԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐժԱՐԱՆԻ

15 Յուլիս կիրակի կէսօրէ վերջ ժամը 3.30-6, տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Վարժարանի Ամալեբը՛ի Հանդէսը, ժառանգաւորաց Վարժարանի քակի հիմաւորց մայրիկ շուքին ներքե հաստատուած շարժական ընթացի վրայ: Հանդէսին կը նախագահէր Գեր. Տեղապահ Ս. Հայրը: Ներկայ էին Գեր. Սրբազաններ, Հոգ. Հայրեր և ժողովուրդի ստուար բազմութիւն:

Մանկապարտէզի փոքրիկները յաջողութեամբ կատարեցին արտասանութիւններ, հայկական պարեր ու փոքրիկ արամախօսութիւններ: Ծագիկ դասարանի 48 երկսեռ աշակերտները ստացան վկայականներ, յաջորդ տարեկիցքին անցնելու համար նախակրթարանի բաժինը:

Իսկ Նախակրթարանի ընթացաւարտ դասարանի, ինչպէս նաև վարժարանի երկրորդական բաժնի ուսանողները կատարեցին խմբերգներ ու լեռնային, արարեղէն, անդլիներէն ու Ֆրանսերէն լեզուներով արտասանութիւններ, ինչպէս նաև շրջանաւարտներէն մին կարգաց խնամուած ուղերթ մը, բոլորն ալ յայտարար նշաններ զարթոյցի կրթական ոգիի յառաջդիմութեան և ուսուցչական կազմին տարուան մը կրթանուէր աշխատանքին:

Հոգ. Տեաչի տարեկան տեղեկագրի ընթերցումէն ետք, Նախակրթարանի 19 երկսեռ շրջանաւարտները ստացան իրենց վկայականները Գեր. Տեղապահ Սրբազանէն, որ «Պատգամիչ»-ով օրհնեց զանոնք ու փակեց Հանդէսը:

ՉԵՌՆԱԿԻՐՈՒԹԻՒՆ ԱՐՏՂԱՆՆԵՐՈՒ

11 Օգոստոս, Շարաթ, Վարդափառի հանդիսաւոր նախատեսակէն ետք, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Քանաւայական կոչման արտագրաւ արարողութիւնը, Ս. Աթոռոյ Սարկաւազներէն Բար. Տիր. Յովսէփ Արք. Մամուրի և Բար. Տիր. Նազար Արք. Մարգարեանի, Անունք՝ առաջնորդութեամբ Հոգ. Տ. Տ. Յակոբ Արշտոյց Վարդապետներու, ձեկաչոք յառաջացան Տաճարի դռնէն մինչև Աւագ Խորան, ուր խարտաւիւակ Գեր. Տ. Հայկազուն Եպս. զանոնք ներկայացուց ձեռնադրիչ Տեղապահ Սրբազանին, Ապա, պատշաճ աղօթքներէ ետք, ընծայեցանքը հրամարեցան հերետիկոսներու դասէն և ուխտեցին հաւատարմօրէն աշակերտիլ Ս. Եկեղեցւոյ ուղղափառ հայրապետներուն, ու արտասանեցին Հայց. Եկեղեցւոյ ուղղափառ դասանութեան հանգանակը:

Յաջորդ օր, 12 Օգոստոս, պատարագիչն էր Գեր. Տեղապահ Ս. Հայրը, որ ձաշու Գիրքէն առաջ բազմեցաւ Ս. Սեղանին առջև, մինչ ընծայեցանքը ձեկաչոք բարձրացան Աւագ Սեղան ու ներկայացան ձեռնադրիչ Սրբազանին: Խարտաւիւակն էր Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արքանման, իրեն առընթերակայ ունենալով Հոգ. Տ. Յակոբ Արք. Վարդանեանն ու Հոգ. Տ. Մարշտոյց Վրդ. Բարիլուսեանը: Յուզիչ էր պահը, երբ ընծայեցանքը Աւագ Սեղանի բեմէն զարձան դէպի ժողովուրդ ձեռամբարձ, ի նշան աշխարհի իրենց հրամարման, մինչ զարգաւ կ'երգէր Անտուածային և երկնաւոր շնորհ...: Ապա, ձեռնադրիչ Սրբազանը անոնց վզին չուրջ բոլորեց իրենց թեկէն կախ ուրարը՝ ի նշան Յիսուսի քաղցը լուծին, ու յաջորդաբար տուաւ իրենց քանանայական զգեստաւորման բոլոր մասերը, սաղաւարտ, փիլոն, վահաս, գօտի, չուրջառ, եայն, տըւութեան ուրոյն աղօթքներով: Կը զոցուի վարատըրը, զղիրներ կ'երգեն նորընծաներուն առաջին խորհուրդ խորհը, մինչ անոնք քանանայական լրիւ զգեստաւորուածով կ'երկին Աւագ Սեղանի ձախակողմը: Սեղան կը բերուի Ս. Միւռնին աղանին, կ'երգուի ձևաքելոյ Աղանոյ շարականը: Օծուի ատենն է, ամենէն զրաւիչ պահն արարողութեան: Ձեռնադրիչ Սրբազանը մի առ մի կ'օժէ նորընծաներու ձեկանն ու զոյգ ձեռքերը Ս. Միւռնուով: Օծման նուիրական պահուն Յովսէփ Սարկաւազ կը վերակոչուի Տ. Յովսէփ Արեղայ, իսկ Նազար Սարկաւազ՝ Տ. Մամբէ Արեղայ: Ապա Տեղապահ Սրբազանը հուտայ իրենց Ս. Պատարագի սկիզբ, տալով իշխանութիւն մատակարարելու Հաղորդութեան ստատուածային խորհուրդը: Ձեռնադրութիւնը վերջացած է: Սարկաւազը կը ձայնէ «Ողջոյն տուք միմիանց», ու Տեղապահ Սրբազանը կը համբուրէ իր ձեռնասուններուն օծեալ ձեկատը: Նայել կ'ընէ նաև Եկեղեցական դասը, իսկ ժողովուրդը Ս. Պատարագէն ետք, երբ անոնք դասին մէջ, լուեցան կը վերձանէին իրենց առջև բացուած Անտարանները:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ, Տեղապահ Սրբազան Հայրը կատարեց վեղարի տըւչութիւնը նորընծաներուն: Պատշաճ ընթերցումներէ և աղօթքներէ ետք, Սրբազանը հանեց սարկաւազական զիտարկը անոնց զօրութիւն ու պսակազարգեց զանոնք կուսակրօնութեան խորհրդանիշը եղող վեղարով: Տաճարը լեցնող բազմութիւնը զարմեալ ապրեցաւ հոգեօրերանութեան պահեր: Ապա նորընծաները ուղղուեցան Ս. Յարութեան Տաճար, ուր պիտի անցնեն իրենց քառասունքի ապշխարութեան օրերը, ուսանելով Ս. Պատարագի կարգերը: Այս շրջանին իրենց ուսուցիչն ու վարժիչն է Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բարխուսեան:

Յակոբ՝ որպէս օգնական լուսարարի Սարկաւազ ձեռնադրուած է Տեղապահ Սրբազանէն, 15 Օգոստոս 1954ին:

Սիոն, յանուն Տեղապահ Ս. Հօր, կը մաղթէ որ նորընծաները ըլլան Մշակ առանց ամօթոյ, ի փառս Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ:

ՔԱՀԱՆԱԳՈՒԹՅԱՆ ԶԵՆՆՈՒՄԻՆՈՒԹՅՈՒՆ

Պատ. Տնօրէն ժողովոյ որոշումով, Տիար Լեոն Աւագեանը, որ երկար տարիներէ ի վեր ծառայած է Ս. Տեղեաց մէջ, զոհացուցիչ իր զարգացմամբ և ծառայութեամբ, յարմար նկատուեցաւ ձեռնադրուելու քահանայ, ի պէտս Ս. Տեղեաց ժամարարութեան:

Նր. Ազրիլ 7ին, Բեթղեմէմի մեր Ս. Աստուածածնայ Եկեղեցւոյ մէջ, Տիար Լեոն ստացաւ զարուսթեան և Սարկաւազութեան աստիճաններ, Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արքահայտնէ:

Իսկ Ազրիլ 16ի կէսօրէ վերջ, նոյն Եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Լեոն Սրկ. ի քահանայական կոչման արարողութիւնը: Յաջորդ օրը, Գլ. 17 Ազրիլին, ի ժամ Ս. Պատարագի և ի ներկայութեան կողիկ բազմութեան մը, Գեր. Տ. Հայկազուն Եպս. կատարեց յիշատի քահանայական ձեռնադրութիւնը, օժման պահուն վերակոչելով զայն Տ. Գրիգոր Բահանայ: Խարտաւիլակն էր Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գապարահան:

Նորընծայ Տ. Գրիգոր Քիչ. Աւագեան ծնած է 1912ին Պուրկազ (Պուլիարիա): Յաճախած է Վառնայի Ազգային Սիսակեան Կուսակրթարանը և աւարտած անոր ընթացքը: 1929-30 աշակերտած է Ս. Աթոռոյ ժառ. վարժարանին: Ապա երկար տարիներ ծառայած է Տնօրինական Սրբավայրերու մէջ և հմտացած է ժամապաշտական արարողութեանց:

Տէր Գրիգոր պիտի ծառայէ Բեթղեմէմի Ս. Շննդեան Տաճարին մէջ որպէս ժամարար:

Կուսանք իրենց համաօտ կենսադրութիւնը:

Հոգ. Տ. Յովսէփ Արդ. Մամուր ծնած է Աղեքսանդրիա, 1907ին, Կոստանթնուպոլիս քաղաքի Երեւոյն Պողոսեան վարժարանին մէջ յաճախած է Անգլիական դպրոց ու ապա իր ուսումը կատարելագործած է Անգլիա: Հմուտ է եւրոպական կարգ մը լեզուներու, ինչպէս նաև Արարեբէնի: Կրօնաւորելու փափաքը զգալով իր մէջ, 1950ին եկած է Երուսաղէմ և նոյն տարին ստացած Աւարակրօնութեան աստիճան: Ժամանակ մը ծառայած է Ս. Յարութեան Տաճարին մէջ, ապա ընդունուած է Ս. Աթոռոյ Դիւանատունը, որպէս զիւանդակի հայերէն թղթակցութեանց: 1954 Օգոստ. 15ին, Տեղապահ Սրբազանէն ձեռնադրուած է Սարկաւազ:

Հոգ. Տ. Մամբրէ Արդ. Մարգարեան ծնած է Կեսարիա, 1912ին, 1918ին, որբանալով, մտած է Ատանայի և ապա Բարեգործականի որբանոցները, ուր մնացած է մինչև 1928: Ատե՛ն մը աշխատած է Պէյրութի Քրանտական օգակայանին մէջ, Ջրաղած է նաև դերձակութեամբ: 1950ին եկած է Երուսաղէմ և ընդունուած է Ս. Աթոռոյ ժառանգութեան մէջ որպէս աշխատաւոր Միարան: 1951ին ստացած է Աւարակրօնութեան աստիճան: Ժամանակ մը ծառայած է ի Բեթղեմէմ և ի Ս.

ՀԱՆԳԻՒՍՏ ԹՐՅԱՆՏԱ ՄԱՅՐԱՊԵՏ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

Շարաթ, 4 Օգոստոսի լուսարացին, իր յաւիտենական հանգիստը մտաւ Ս. Աթոռոյ Մայրապետներէն Թրֆանտա Սարգիսեան, որ տարիէ մը ի վեր անհանգիստ վիճակ մը ունէր:

Հանգուցեալը ծնած է Ջէյթուն, 1883ին: Արարատեան որբանոցի «Մայրիկը եղած է 4 տարիներ, 1922ին եկած է Երուսաղէմ և ծառայած է Ս. Աթոռոյ մատակարարութեան ճիւղին մէջ որպէս տնտեսուհի: 1938ին կ'ընդունուի Ս. Ուխտի Մայրապետաց շարքէն ներս:

Թաղման կարգը կատարուեցաւ նոյն օրը կէսօրէ առաջ ժամը 11ին, Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արքահայտնի և ի ներկայութեան բովանդակ Միարանութեան: Մարմինը ամփոփուեցաւ Չամ-Թաղի զերեզմանատան մէջ:

Տէրը թող յաւիտենական հանգիստ պարգևէ իր հոգիին: